

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2021թ.-ի մարտի 18-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2019թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Լրամշակված է՝ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի
գիտական խորհրդի 2014թ.-ի ապրիլի 23-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

Հիմք՝ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի
գիտական խորհրդի 2012 թ.-ի փետրվարի 16-ի նիստում հաստատված
ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները խթանելու
դասախոսի հավելավճարի տարբերակված համակարգ
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՏԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ) աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խթանման համար հավելավճարի տրամադրումը իրականացնում է սույն ընթացակարգով:
2. Յուրաքանչյուր տարեվերջին առանձին աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության արդյունքները՝ համապատասխան ձևաչափով (Հավելված 1) և հիմքերով, առանձին փաթեթներով ամբիոնի վարիչի կողմից ներկայացվում է Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն:
3. Հավելավճար տրամադրվում է այն գիտահետազոտական ու գիտամեթոդական աշխատանքների և այն գրախոսումների համար, որոնցում առկա է նշում հեղինակի՝ ՇՊՀ-ի աշխատակից լինելու վերաբերյալ:

4. Ներկայացված փաթեթների ուսումնասիրությունից հետո Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնում հաշվարկվում է աշխատակիցների կողմից ծավալված գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության արդյունքները՝ ըստ կից հավելվածի (Հավելված 2):
5. Տվյալ տարվա այն գիտական աշխատությունները, որոնք չեն ներառվել ցուցակում համապատասխան հիմքերի բացակայության պատճառով, կարող են ընդգրկվել առավելագույնը հաջորդ տարվա ցուցակում՝ բացակայող հիմքերը ներկայացնելու դեպքում:
6. Այն գիտական աշխատությունները, որոնք բավարարում են հավելված 2-ով ներկայացված գործունեության մի քանի կետերի, հաշվարկը կիրականացվի ըստ առավել բարձր սանդղակի:
7. Հաշվարկումից հետո արդյունքները ներկայացվում են ամբիոններ՝ առաջարկելով սեղմ ժամկետում տեղեկացնել հնարավոր անճշտությունների մասին:
8. Հավելվածարի տրամադրման վերջնական ցուցակը Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից ներկայացվում է ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովին, որն էլ վերջնական հաստատում է հավելվածարի տրամադրման վերջնական ցուցակը:
9. Վիճարկելի հարցերը քննարկվում են հանձնաժողովի կողմից և կայացվում համապատասխան որոշում:
10. Հանձնաժողովի կայացրած որոշման հիման վրա ռեկտորը տալիս է աշխատակիցների հավելվածարի վճարման վերաբերյալ հրաման:
11. Կատարված հաշվարկների արդյունքում ստացված գումարը չի ներառում եկամտային հարկը և սոցիալական վճարի հետպահումները:
12. Սույն ընթացակարգի 2021 թ.-ի մարտի 18-ին փոփոխված դրույթները ուժի մեջ կմտնեն 2021 թ.-ից:

Անուն, ազգանուն

Գիտ.աստիճան, կոչում

Ամբիոն

Հ/Հ	Աշխատանքի վերնագիր	Պարբերական/Գիտաժողով (գիտաժողովի դեպքում անհրաժեշտ է նշել նաև անցկացման վայրը, օրերը)	Երկիր, հրատարակչություն	Տարի	Հատոր, համար	Էջեր	Համահեղինակ	Գործունեության տեսակը																		
								Scopus կամ Web of Science շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրում հոդված	Միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրում հոդված	ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագիր և ժողովածու	ՇՈՀ-ի Գիտական տեղեկագիր	ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագիր և ժողովածու	ԲՄԻԼ հասնակարգում ընդգրկված գիտական ամսագիր և ժողովածու	Միջազգային գիտաժողովի ժողովածուում գիտական հոդված	Միջազգային գրախոսվող ամսագիր	Գրախոսվող նեղ մասնագիտական ամսագիր	Հանրապետական գիտաժողովի ժողովածու	Գիտամեթոդական աշխատանք	Գիտական մենագրություն	Այլ						
1.																										
2.																										
3.																										
4.																										

Ամբիոնի վարիչ՝ _____

Անուն, ազգանուն

Ստորագրություն

Գործունեության տեսակը		Գումարի չափը (ՀՀ դրամ)
1	Scopus կամ Web of Science շտեմարաններում ընդգրկված գիտական ամսագրում հոդված	80 000
2	Միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրում հոդված	50 000
3	ՌԴ ԲՈՆ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	35 000
4	ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում հրատարակված գիտական հոդված	25 000
5	ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	20 000
6	ՔՊՀԿ համակարգում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	20 000
7	Միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածուում հրատարակված գիտական հոդված	20 000
8	Միջազգային գրախոսվող ամսագրում հոդված	15 000
9	Գրախոսվող նեղ մասնագիտական ամսագրում հոդված	15 000
10	Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից հաստատված հանրապետական գիտաժողովի աշխատանքների ժողովածուում հոդված	10 000
11	Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական/ֆակուլտետային խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից թույլատրված գիտամեթոդական աշխատանք	1 տպ. մամուլ- 2000
12	Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական/ֆակուլտետային խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից թույլատրված գիտական մենագրություն	1 տպ. մամուլ- 3000
13	Գիտական գյուտի պետական հեղինակային վկայագիր	20 000
14	Միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ	20 000
15	Միջազգային պաշտոնական կառույցների կողմից կազմակերպված ցուցահանդեսի ծրագրում ընդգրկվածություն և մասնակցություն (կերպարվեստ, քանդակագործություն, երաժշտական գործ)	20 000
16	Մենագրությունների, ուսումնամեթոդական աշխատանքների, դասագրքերի, թեկնածուական և դոկտորական աշխատանքների գրախոսում	1 գրախոսումը - 5000
17	Գիտական հոդվածների գրախոսում	1 գրախոսումը - 2000